

## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այստեղ ներկայացված են eli.am կայքի (այսուհետ՝ Կայք) միջոցով գործարքների՝ նվերների եւ նվեր-փաթեթների գնման, առաքման, վճարման եւ այլ գործարքների իրականացման հիմնական պայմանները: Սույն պայմանները համարվում են հրապարակային առաջարկ (օֆերտա) հաճախորդների հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով: Այս պայմանները կարող են թարմացվել eli.am-ի կողմից՝ իր բացառիկ հայեցողությամբ:

### 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն պայմանագիրը (Օֆերտան) կնքելու լրիվ և անվերապահ համաձայնություն (Ակցեպտ) է համարվում հաճախորդի կողմից Կայքում գրանցվելը կամ պատվեր կատարելը որպես գրանցված կամ չգրանցված հաճախորդ, ինչպես նաև որպես գործընկեր՝ ապրանքների կամ ծառայությունների՝ Կայքում ներկայացնելու համաձայնություն տալը:
- 1.2. Կայքում ներկայացված են ապրանքներ եւ ծառայություններ, որոնք իր (eli.am-ի) եւ իր հետ փոխկապակցված գործընկերների սեփականությունն են:
- 1.3. Առցանց պատվիրված ապրանքները եւ ծառայությունների վկայագրերը կարելի է ձեռք բերել ինչպես ցուցասրահից, որը գտնվում է ք. Երեւան, Կորյունի փ. 23/37 հասցեում, այնպես էլ առաքման ծառայության միջոցով:

### 2. Վճարման պայմաններ

- 2.1. Վճարման պարտականությունն առաջանում է eli.am կայքի միջոցով ապրանքի կամ ծառայության պատվերի դեպքում՝ անկախ նրանից, թե որտեղ է պատվիրատուն նախընտրում ստանալ պատվերը՝ ցուցասրահում, թե իր նշած հասցեով առաքմամբ:
- 2.2. Վճարման եղանակները ներկայացված են Կայքի [«Վճարում» բաժնում](#), որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը՝ Չավելված 1-ը:
- 2.3. Կանխիկ վճարումն իրականացվում է ցուցասրահում կամ առաքման հասցեում պատվերը ստանալու պահին: Պատվիրատուն ցուցասրահում կամ առաքչի կողմից ներկայացվող ապրանքը կամ ծառայության վկայագիրը կարող է տեղում բացել, ստուգել դրա համապատասխանությունը կայքում

ներկայացվածին, որակական և քանակական հատկանիշները, այնուհետև կատարել վճարում:

- 2.4. Առցանց վճարումն իրականացվում է պատվերի գրանցման պահին՝ կայքում հասանելի վճարման եղանակներով:
- 2.5. Բանկային փոխանցմամբ գնում կարող են իրականացնել միայն իրավաբանական անձինք:

### **3. Առաքման պայմաններ**

- 3.1. Առաքման ծառայությունը հասանելի է ամեն օր՝ ժամը 10:00-20:00-ը, բացի կիրակի օրերից: Առաքման ձգձգումը հնարավոր է անկանխատեսելի դեպքերի առկայության պարագայում, որոնք տեղի են ունեցել մեր կամքից անկախ: Այդ դեպքում գնորդը կամ ստացողը անպայման տեղեկացվում է առաքման ժամկետի փոփոխության մասին:
- 3.2. Առաքման եղանակները նշված են eli.am կայքի [«Առաքում» բաժնում](#), որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը՝ Յավելված 2-ը:
- 3.3. Եթե առաքված պատվերն ինչ-ինչ պատճառով դուր չի գալիս գնորդին կամ ստացողին և նա ցանկանում է վերադարձնել այն, ապա այդ դեպքում անհրաժեշտ է վճարել առաքման գումարը՝ անկախ պատվիրված նվերների գումարի չափից:
- 3.4. Պատվերը երկու տարբեր հասցեներով առաքելու համար անհրաժեշտ է ձևակերպել երկու տարբեր պատվերներ: Մեկ պատվերի շրջանակում ապրանքը կամ ծառայության վկայագիրը կարող է առաքվել միայն մեկ հասցեով:
- 3.5. Երեւան քաղաքում 24 ժամվա ընթացքում Նվեր-փաթեթների վկայագրերի առաքման համար չեն գործում ապրանքների առաքման համար գնային արտոնությունները: Նվեր-փաթեթների վկայագրի առաքման արժեքը կազմում է 500 դրամ՝ անկախ փաթեթի արժեքից:

### **4. Փոխանակումն ու վերադարձը**

- 4.1. Պատվիրված ապրանքների եւ ծառայությունների փոխանակումն ու վերադարձն իրականացվում են ՀՀ Սպառողների իրավունքների մասին օրենքի դրույթների տառին եւ ոգուն համապատասխան:

### **5. Մտավոր սեփականության իրավունքները**

- 5.1. Դուք ընդունում եք և համաձայն եք, որ eli.am կայքում առկա բոլոր նյութերը, բացառությամբ հաճախորդի մեկնաբանությունների, ներառյալ, բայց

չսահմանափակվելով տեքստերը, ծրագրերը, գրաֆիկական կամ ոչ-գրաֆիկական նկարները, ձայնագրությունները, երաժշտությունը, տեսահոլովակները, ինտերակտիվ հնարավորությունները և դրանց նման նյութերը (այսուհետ՝ Նյութեր), ինչպես նաև դրանում առկա ապրանքանիշերը, ծառայությունների նշաններն ու լոգոները (այսուհետ՝ Նշաններ) պատկանում են eli.am-ին կամ արտոնագրված են նրա կողմից և ենթակա են պաշտպանության որպես հեղինակային իրավունք և մտավոր սեփականության իրավունք՝ միջազգային կոնվենցիաների եւ ներպետական օրենսդրության համաձայն:

5.2. Կայքի Նյութերը տրամադրվում են միայն Ձեր անձնական օգտագործման համար և չեն կարող օգտագործվել, պատճենահանվել, վերարտադրվել, բաշխվել, փոխանցվել, հեռարձակվել, ցուցադրվել, արտոնագրվել կամ այլ կերպ շահագործվել որևէ այլ նպատակով առանց այդ Նյութերի սեփականատերերի նախնական գրավոր համաձայնության:

## 6. **Տվյալների գաղտնիությունը**

6.1. Eli.am-ը գերակայություն է համարում հաճախորդների տվյալների գաղտնիության պահպանումն ու պաշտպանությունը: Հավաքագրված անձնական տվյալներն օգտագործվում են առաքման եւ սպասարկամն որակի բարելավման նպատակով եւ դրանք կարող են փոխանցվել երրորդ կողմի **միայն** ՀՀ «Անձնական Տվյալների Պաշտպանության օրենքով» նախատեսված դեպքերում:

## 7. **Վեճերի լուծման կարգը**

7.1. Սույն պայմանների կապակցությամբ ծագած վեճերը կարող են լուծվել արտադատական կարգով՝ բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: